

**XIX Դ. ԱՍՏՐԱԽԱՆՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ռուսաստանի տնտեսական և հասարակական կյանքին հայ գաղթօջախների բնակչության ակտիվ մասնակցությունը, նրա կապերը հարազատ մշակույթի հետ, առաջ էին քաշում այդ գաղթօջախներում հայկական դպրոցների կազմակերպման անհրաժեշտությունը: Երկրում հայկական ուսումնական հաստատության կազմակերպման առաջին փորձերը ձեռնարկվել են XVIII դ. վերջերից, հայկական գաղթօջախներից ամենից հնում և զարգացածում՝ Աստրախանի գաղթօջախում: XIX դ. սկզբում՝ 1810 թ., Աստրախանում վերջապես բացվեց Աղաբաբյան դպրոցը, որը Ռուսաստանում հայկական կրթության կազմակերպման գործում նշանակալից դեր խաղաց¹:

Աղաբաբյան դպրոցը Աստրախանի պատմության մեջ առաջին ուսումնական հաստատությունն էր, որի ծրագիրը հաշվի էր առնում այնպիսի կարևոր վարչատնտեսական կենտրոնի, ինչպիսին էր Աստրախանը, վաղուց հասունացած պրակտիկ պահանջները²: Հարկ է նշել, որ XIX դ. սկզբում Ռուսաստանում ընդհանրապես քիչ կային նմանօրինակ դպրոցներ: Հաշվի առնելով այս բոլորը, ընդգծելի է հայր և որդի նիկողայոս ու Հովհաննես Աղաբաբյանների կուլտուր-յուսավորական գործունեության մեծ նշանակությունն ինչպես Աստրախանի, այնպես էլ հայկական մշակույթի պատմության մեջ: «Աղաբաբովը,— գրել է Աստրախանի նահանգի դպրոցների և գիմնազիաների դիրեկտոր, գավառագետ Մ. Ռիբուշկինը,—որպես հեռատես և կրթյալ այր, չէր գոհանում իր դպրոցում ուսուցման տարրական առարկաների դասավանդմամբ, այլ ցանկանալով, որ գիտությունների կուրսը իր հաստատությունում լինել սովորական դպրոցների շրջանակներից լայն, նախատեսում էր մտցնել օրինագիտություն, հաշվապահություն, մուրհակային իրավունքի դասավանդում, պլանների և իրավիճակների գծահանում (հատկապես Կասպից ծովի ափերից) և նավագնացության գիտություն»³:

Դպրոցի ծրագրի բովանդակության տարողունակությունը ու գործնականությունը հաստատվում է նաև «1810 թվականին Աստրախանի նահանգում գտնվող ուսումնական հաստատությունների մասին պատմական պաշտոնագրով»⁴:

¹ Աղաբաբյան դպրոցի պատմության մասին տե՛ս Վ. Կ. Ոսկանյան, Վ. Ռ. Գրիգորյան, Աստրախանի հայկական Աղաբաբյան դպրոցի պատմությունից (Մոսկվայի մանկավարժ, 1956, № 3, էջ 45—55, Մ. Հ. Ուսնիթոսյան, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 286—290, Վ. Ա. Խաչատրյան, Տասնութերորդ դարի Աստրախանի հայերի մշակութային կյանքի պատմությունից («Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 299—306), Հ. Գ. Զաքարյան, Աստրախանի հայոց Աղաբաբյան ուսումնարան («Երևանի համալսարան», 1971, № 11, էջ 65—70), В. А. Хачатурян, Из истории Астраханской Агабабовской школы (Материальная база школы) (ՀՍՍՀ ԳԱ «Երաբեր հասարակական գիտությունների», 1981, № 1, էջ 52—64):

² ՀՍՍՀ ԳԱ «Երաբեր հասարակական գիտությունների», 1981, № 1, էջ 52:

³ М. Рыбушкин, Записки об Астрахани, М., 1841, с. 162—163.

⁴ ԹԽՍՀ կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ԹԽՍՀ ԿԳԱ), ֆ. 92, ց. 1, գ. 342, ք. 32 և հակ.:

Դպրոցի ընդարձակ ծրագիրն ամբողջությամբ կյանքում չիրագործվեց, դիտավորապես համալսարանի կադրերի բացակայության պատճառով, չնայած հայերեն առարկաների դասավանդման գործը քիչ թե շատ լավ հիմքերի վրա էր դրված: Հայոց լեզվի և հայոց պատմության առաջատար դասատուն էր հատուկ հրավիրված Ս. Պատկանյանը, որը կրթություն էր ստացել Եվրոպայում և Աստրախանում՝ աշխատեց 1810—1822 թթ.: Նա դասավանդում էր նաև տրամաբանություն ու ճարտասանություն:

Ավելի բարձր էր ռուսաց լեզվի և կիրառական գիտությունների դասավանդման գործը: Ռուսաց լեզվի ուսուցչին էր հանձնարարված նաև պատմության, աշխարհագրության և նկարչության դասավանդումը: Աղաբաբյան դպրոցի պահանջները հնարավոր չէր բավարարել այնպիսի առարկաների ուսուցչներով, ինչպիսիք էին տեխնոլոգիան, նավագնացությունը, մուրհակային իրավունքը և այլն: Միայն 1819 թ. հաջողվեց կազմակերպել հաշվապահական դասավանդումը⁵, Թվաբանությունը, հաշվապահությունը, պատմությունը և աշխարհագրությունը (չսուսելով արդեն ռուսերենի քերականության մասին) դասավանդվում էին ռուսերեն, հայերեն դասավանդվում էին միայն հայերենի քերականությունը, կրոնը և պատմությունը:

Դպրոցը պետական ուսումնական հաստատությունների կատեգորիայի փոխադրելուց հետո էլ (1838) ծրագրերը հիմնականում մնացին առանց փոփոխությունների: Վերակազմված դպրոցում դասավանդվում էին կրոն (հայ լուսավորչական), հայերենի և ռուսերենի քերականություն ու մաթեմատիկություն, Թվաբանություն, նկարչություն, հայկական եկեղեցական երաժշտություն:

XIX դ. 30-ական թվականներին նորից ծառացավ Աստրախանի գիմնալիայում հայոց լեզվի դասավանդման հարցը: Դա, հավանաբար, հետևանք էր Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի հետ միացման, որի պատճառով տեղի ունեցավ Անդրկովկասի հետ տնտեսական կապերի աշխուժացում և այնտեղից դեպի Ռուսաստանի ուսումնական հաստատությունները սովորողների հոսքի ուժեղացում: 1835 թ. նոյեմբերին Կազանի ուսումնական օկրուգի հոգաբարձուն Մ. Ռիրուշկինն ուղարկեց նամակ՝ Աստրախանում հայոց լեզվի դասավանդում կազմակերպելու առաջարկությամբ: Մերևելյան լեզուների իմացության հիմնավորությունը, — ասվում էր նամակում, — կարող է կարևոր օգուտ բերել Ռուսաստանին թե՛ քաղաքական ու առևտրական հարաբերություններում և թե՛ գիտական ուսումնասիրություններում: Այս վերջիններիս վերաբերյալ հայոց լեզուն զբաղեցնում է առաջին տեղերից մեկը, քանզի այժմ Ռուսաստանին հպատակ տարբեր հայկական վանքերի զրադարաններում մեծ թվով պահվող հին ձեռագրերի քննությունը, անշուշտ, ի հայտ կբերի պատմության համար թանկարժեք աղբյուրներ...: Սույն կարևոր նպատակի իրագործման՝ երիտասարդների նախապատրաստման համար առաջնագույն տեղը պատկանում է Աստրախանին, որն ունենալով հայկական դպրոց, իսկ բնակիչների թվում՝ բավականաչափ շատ կրթված հայեր, կարող է խթան հանդիսանալ հայոց լեզվի հիմնավոր ուսումնասիրման համարը⁶:

Մ. Ռիրուշկինը դեկտեմբերի 14-ին հոգաբարձուին ուղղած պատասխանում հաղորդեց, որ հայոց լեզուն ուսումնասիրելու ցանկություն են հայտնել երեք գիմնազիստներ և Աղաբաբյան դպրոցի երեք սաներ, որոնցից ընտրվել է Նոս հոգի: Գերմաներենի և լատիներենի փոխարեն նրանք պետք է ուսում-

⁵ Մ. Հ. Սանթրոսյան, նշվ. աշխ., էջ 334:

⁶ Նույն տեղում:

⁷ «Երեանի համալսարան», 1971, № 11, էջ 66:

⁸ Т. Остроумов, Исторический очерк Астраханской 1-й мужской гимназии за время с 1806 по 1914 год, Астрахань, 1916, с. 196.

նասիրերին պարսկերեն, թաթարերեն և հայերեն: Այս սաների ուսումնառության ծախսերը հոգալու համար պահանջվում էր տարիական 2533 ռ. 73 կ., չհաշված դասավանդողի 600 ռ. վարձը, որի պաշտոնի համար Մ. Ռիբուշկինը նախատեսել էր Աղաբաբյան դպրոցի ավագ վերակացու հայազգի Գ. Պոպովի թեկնածությունը⁹: Սակայն այս առաջարկությունները, շնայած ուսումնական օկրուգի հոգաբարձուի աջակցությանը, հանդիպեցին խնդրանկալություն, ուղղափառություն և ժողովրդայնություն հետադիմական սկզբունքի նախաձեռնորդի՝ լուսավորության մինիստր Ս. Ուվարովի առարկություններին: Նրա կարծիքով Վհետեանքները, որոնք կարելի է սպասել, չեն հատուցի դրանք իրականացնել պահանջող զգալի ծախսերը...¹⁰, Այս անհաջողությունը չվհատեցրեց Մ. Ռիբուշկինին, որի գործունեությունը բնութագրվում է երկրամասի բնակչության հանդեպ ունեցած մեծ ուղադրությամբ և հետաքրքրությունով¹¹: Բանն այն է, որ, գալով Աստրախան և ծանոթանալով տեղի հայերի հետ, Մ. Ռիբուշկինը դարձել էր տեղի գիմնազիայում հայոց լեզվի դասավանդման կազմակերպման գաղափարի ջերմ պաշտպանը: Նրա հետաքրքրությունը դեպի հայ ժողովրդի մշակութային և պատմական արժեքներն այնքան մեծ էր, որ նա Հայաստան մեկնելու ցանկություն էր հայտնել: Այդ է վկայում ուսումնական օկրուգի հոգաբարձուին ուղղված նրա խնդրանքը՝ թույլատրելու Աղաբաբյան դպրոցի հայոց լեզվի ուսուցիչ Գ. Պոպովի հետ միասին 1836—1837 թթ. ձմռանը մեկնել Կովկաս՝ «հայկական վանքերում գտնվող կարևորագույն ձեռագրերի թարգմանման և պատճենահանման համար»¹²:

Քանի որ գիմնազիայում հայոց լեզվի դասավանդման հարցում մինիստրության հիմնական առարկությունները վերաբերվում էին հայոց լեզվի ուսուցչին ուժեղի վճարելու անհրաժեշտությանը, Մ. Ռիբուշկինը Գ. Պոպովին համոզեց գիմնազիայում անվճար դասավանդել: Նմանօրինակ խնդրանքով նա դիմեց նաև հայկական կրոնի ուսուցիչ, քահանա Մ. Յուզբաշյանին: Ընդ որում, Մ. Ռիբուշկինն ընդգծում էր, որ հայոց լեզվի և հայկական կրոնի դասավանդումը կնպաստեր հայ երեխաների ավելի մեծ հոսքին՝ դեպի գիմնազիա:

Կազանի ուսումնական օկրուգի հոգաբարձու Մ. Մուսին-Պուշկինին հաղորդելով Գ. Պոպովի և Մ. Յուզբաշյանի համաձայնությունը՝ գիմնազիայում անվճար դասավանդելու մասին, Մ. Ռիբուշկինը խնդրում էր նրանց թույլատրել մասնակցելու հայոց լեզվի ինչպես և լուսավորչական եկեղեցու դավանանքի դասավանդմանը՝ Վհետեանքի հայոց լեզվի առանձնահատկություններին, նրա գրականությանը, որն այդքան քիչ է հայտնի գիտական աշխարհին և Նրեանի մարդի եկեղեցիներում գտնվող շատ կարևոր պատմական փաստերին ուսու պատանեկությանը ծանոթացնելու համար: Իմ կարծիքով, — նշում էր նա, — օգտակար կլիներ Աստրախանի գիմնազիայում մտցնել հայոց լեզվի ուսուցումը, որ տեսանելի օգուտ կբերեր և կընդարձակեր մեր գիտելիքների նեղ շրջանակները հինավուրց Հայաստան երկրի մասին: ...Ուսումնական հաստատությունների դասընթացի մեջ առաջին առարկայի մտցնելը ուսու պատանեկությանը կծանոթացնի հայ ժողովրդի հնություններին և լեզվին, իսկ պետական ուսումնական հաստատություններում վերջինիս ուսուցումը հայ երեխաներին զերծ կպահեր նրանց կրոնի դոգմաների անորոշ և հաճախ թյուր բացատրություններից, որոնք նրանց ներշնչում են տգիտ հոգևորականները՝ այս կարևոր առարկայի Աստրախանում միակ փոքրիշատե

⁹ Նույն տեղում, էջ 197:

¹⁰ ԹԻՄՍՆ ԿՊԱ, ֆ. 92, ց. 1, գ. 4339, թ. 12 հալ.

¹¹ В. Аристов, Н. Ермолаева, Все началось с путеводителя. Поиски литературные и исторические, Казань, 1975, с. 24.

¹² ԹԻՄՍՆ ԿՊԱ, ֆ. 92, ց. 1, գ. 4339, թ. 12 հալ.

կրթություն շտապած ուսուցիչները¹³։ Վերոգրյալն ականախ ցույց է տալիս, որ գավառական այս ծառայողի խոսքերում ավելի շատ պետական մտքեր էին պարունակվում, քան միևնույն տարական գրություններում։

Իմանալով Գ. Պոպովի և Մ. Յուզբաշյանի անվճար դասավանդելու համաձայնության մասին, լուսավորության մինիստրը 1838 թ. փետրվարի 3-ին համաձայնեց Աստրախանի գիմնազիայում հայոց լեզվի և կրոնի դասավանդում մտցնելուն Քայնտեղի հայերի երեխաների համար, հնարավորություն տալով նաև ռուս աշակերտներից ցանկացողներին՝ սովորել հայոց լեզուն¹⁴։

Հետաքրքիր է նշել, որ Գ. Պոպովից հետո գիմնազիայում հայոց լեզվի դասավանդող դարձավ ռուս ուսուցիչ Վ. Չերնիշևը, որը մինչև այդ աշխատում էր որսյան թաթարերենի նահանգային թարգմանիչ։ Ըստ գիմնազիայի գերեկտորի գնահատականի, Վ. Չերնիշևն այս պարտականությունները կատարում էր «անշեղորեն և կատարյալ ջանասիրությամբ»։ Ըստ որում, նա Գ. Պոպովի նման դասավանդում էր անվճար։ Վ. Չերնիշևը դասավանդեց մինչև 1856 թ., որից հետո այդ առարկայի դասավանդումը գիմնազիայում ընդմիջվեց մինչև 1862 թ., երբ այն հանձնարարվեց Աղաբաբյան դպրոցի հայոց լեզվի դասատու Խոթովյանցին¹⁵։

Ցավոք, հայ աշակերտների թիվը Աստրախանի գիմնազիայում զգալի էր միայն ցածր դասարաններում, իսկ ավարտականում նրանց քանակը կտրուկ կրճատվում էր։ 1812—1860 թթ. Աստրախանի գիմնազիան ավարտած 192 շրջանավարտների ազգանուններից միայն մի քանիսն են հաստատապես հայկական։ Ընդ որում, հայ շրջանավարտների հանդիպում ենք սկսած 1840-ական թվականներից¹⁶, 1852 թ. գիմնազիայում սովորում էին 15 հայեր¹⁷։ Խոսելով Աստրախանի գիմնազիայի հայ շրջանավարտների մասին, հետաքրքիր է նշել, որ գիմնազիայի 1848 թ. շրջանավարտ Իվան Խատատտովը ավարտական շարադրության թեմա էր ընտրել «Աստրախան տեղափոխված հայերի մասին» հարցը¹⁸։

Աստրախանի հայերի կրթություն ստացող երեխաների հիմնական զանգվածը պլիավորապես սովորում էր Աղաբաբյան դպրոցում։ Հենց այնտեղ էին, ամենից առաջ, տրվում հայոց լեզվից հիմնավոր գիտելիքներ։ Չնայած այդ դպրոցում առարկաների մեծամասնությունը դասավանդվում էր ռուսերենով, սակայն չի կարելի համաձայնվել Մ. Սանթրոսյանի հետ, որի կարծիքով Աղաբաբյան դպրոցն այդպիսով քիչ էր տարբերվում ռուսական պետական ուսումնական հաստատություններից, որոնցում հայ աշակերտների զգալի քանակի առկայությունը դեպքում նույնպես կարելի էր ուսումնասիրել հայոց լեզուն¹⁹։ Աղաբաբյան դպրոցում հայագիտական առարկաներն առաջատար էին և, բացի այդ, այնտեղ շարունակ նաև մյուս առարկաները հայերենով դասավանդելու հարցն էր ծառայած։ Դա հաստատվում է դասագրքերը հայերեն թարգմանելու բազմաթիվ փորձերով։ Ինչպես ցույց են տալիս փաստերը, դասագրքերի պրոբլեմը XIX դ. հայկական դպրոցներում միշտ էլ սուր է եղել։ Հայկական դպրոցները (նույնիսկ հոգևոր) որպես օրենք ստեղծվում էին մասնավոր նախաձեռնությամբ, տարբեր երկրներում։ Ղրանց ծրագրերը հարմարեցվում էին տվյալ երկրի կամ գաղթօջախի հայ բնակչության պահանջներին և տեղի դպրոցական կրթության համակարգին։ Ռուսաստանի հայկական գաղթօջախներում մեծ տարածում ունեին Աբրահամ Վաղարշապատցու (Աստվա-

¹³ Նույն տեղում, թ. 14 և հազ.

¹⁴ Նույն տեղում, թ. 17։

¹⁵ Т. Остроумов, նշվ. աշխ., էջ 251։

¹⁶ Նույն տեղում, էջ 744։

¹⁷ РѢСУЛ ԿՊԱ, ֆ. 82, ց. 1, գ. 6721, թ. 1։

¹⁸ Т. Остроумов, նշվ. աշխ., էջ 251։

¹⁹ Մ. Սանթրոսյան, նշվ. աշխ., էջ 327։

ծատրյան) ռուսերենից թարգմանած «Նորագույն զրույցները»²⁰, որոնք երեսնաներին պատմում էին նրանց շրջապատող առարկաների և երևույթների մասին: Այս գիրքը հրատարակվել էր Սևաստրախանում, 1820 թ. և, առաջին հերթին, նկատի էր առնված Աղաբաբյան դպրոցի և 1817 թ. բացված Աստրախանի հոգևոր ուսումնարանի պահանջների համար:

1827 թ. Աբրահամ Վաղարշապատցին Մոսկվայում հայերեն հրատարակեց ռուսաց լեզվի համառոտ քերականության դասագիրքը²¹, Դա առաջին ձեռնարկն էր, որով հայերին հրամցվում էին ռուսական քերականության հիմունքները: Ավելի վաղ՝ 1821 թ., Աղաբաբյան դպրոցի նախկին աշակերտ Հ. Ալամդարյանը Մոսկվայում հրատարակեց ռուս-հայերեն համառոտ բառարանը²², որը փոքր դեր չխաղաց Ռուսաստանում ասորող հայերի կրթության գործում: Դեռևս 1815 թ. Աստրախանում Հ. Վեյսկհոպֆենի տպարանում հրատարակվեց «Ռուս-հայերեն աբբեցնարանը», որը կազմել էր հայկական կաթոլիկական ուսումնարանի տեսուչ Կ. Շավերդովը²³: Այս գրքերը տասնամյակների ընթացքում ուսումնական ձեռնարկների դեր էին կատարում, սակայն աճող պահանջները ստիպում էին նոր դասագրքերի ստեղծման հարց բարձրացնել:

1838 թ. Աստրախանի հայկական կոնսիստորիայի ծառայող Ք. Մարդանովը ռուսերենից հայերեն թարգմանեց Ֆ. Բուսսեի թվաբանության դասագրքի առաջին մասը: Նա այդ կատարեց Մ. Ռիբուշկինի հանձնարարությամբ՝ Աղաբաբյան դպրոցում այն գործածելու համար: Ք. Մարդանովի թարգմանությունը հավանության արժանացավ արտահաստիքային պրոֆեսոր Մ. Բրոսսեի կողմից, և ժողովրդական լուսավորության դեպարտամենտը թույլատրեց դպրոցի միջոցների հաշվին տպագրել դրանից 300 օրինակ, նպատակ ունենալով տպաքանակը հետագայում ավելացնել տպագրված օրինակների վաճառքից ստացված եկամուտի հաշվին²⁴:

1838 թ. վերջերին Մ. Ռիբուշկինը դիմեց Կազանի ուսումնական օկրուգի հոգաբարձուին, որպեսզի թույլտվություն ստանա տպագրելու իր հանձնարարությամբ՝ Ի. Կադանովի «Ռուսաստանի պատմությունից» քահանա Թ. Նազարյանի (Ֆ. Նազարովի) կատարած թարգմանությունը²⁵: Նա հոգաբարձուին գրում էր, որ ընայած ռուսական քաղաքում բնակվելուն և ռուսերենի դասավանդմանը, այդ լեզվից սովորողների ցածր գիտելիքների մակարդակը նրանց թույլ չի տալիս անհրաժեշտ չափով յուրացնել մյուս առարկաները: Մ. Բրոսսեն և ադյունկտ Ուստրյալովը հավանություն տվեցին Թ. Նազարյանի թարգմանությանը՝ անելով որոշ դիտողություններ: Թերությունների ուղղումից հետո ժողովրդական կրթության դեպարտամենտը 1840 թ. փետրվարի 8-ին թույլատրեց գրքի 400 օրինակի տպագրումը: Այն լույս տեսավ «Համառոտ գծագրութիւն Ռուսաց պատմութեան» խորագրով՝ Լազարյան ճեմարանի տպարանում: Գրքի 200 օրինակը հեղինակն անվճար նվիրեց Աղաբաբյան դպրոցին²⁶:

²⁰ Աբրահամ Վաղարշապատցի, Նորագույն զրույցք թարգմանեալ ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառ ի Յաշտարխան, 1820:

²¹ Աբրահամ Վաղարշապատցի, Համառոտ քերականութիւն ի ռուսաց լեզուէ ի հայ, Մոսկուա, 1827:

²² Յարուսիւն Ալամդարեան, Համառոտ բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառ, Մոսկուա, 1821:

²³ «Ռուսաց և հայոց այբբենական տետրակ, արարեալ յուսումն դեռահաս տղայոց Հայկազնեաց», յԱստրախան, յամի Տեառն 1815:

²⁴ ԹԻՍՍՆ ԿՊՍ, ֆ. 92, ց. 1, գ. 4832:

²⁵ Նույն տեղում, ք. 3 և հակ.:

²⁶ Նույն տեղում, ք. 15 և հակ. 20—21, 34—35, 39:

Մ. Ռիբուշկինը դրեց նաև ուսումնական բառարանի հրատարակման անհրաժեշտության հարցը: «Աստրախանի հայկական Աղաբաբյան դպրոցում կատարվող փորձերի և դասատուների դասավանդումներին իմ այցելությունների ժամանակ, — 1840 թ. մայիսի 29-ին գրում էր նա օկրուգի հոգաբարձուին, — ես նկատել եմ, որ սույն հաստատության աշակերտները ուսանելի լեզվի չիմացության պատճառով հաճախ չեն հասկանում ուսումնական առումով օգտադրո՞վող և վերացական բառերը. այդ պատճառով, մտադրություն ունենալով վերացնելու այդ թերությունը, ես հանձնարարեցի հաստիքային տեսուչ Պոպովին՝ կազմելու այնպիսի ղեկավարող գիրք, որում տեղ կգտնեին բոլոր այն բառերը, որոնք դասերը բացատրելիս օգտագործվում են և առօրեական են»²⁷, Կ. Պոպովի բառարանը նույնպես թուլյատրվեց տպագրել 600 օրինակով²⁸, Այն տպագրվեց 1841 թ.՝ կազարյան Ճեմարանի տպարանում, «Համառոտ բառարան Ռուսաց և Հայոց» վերնագրով²⁹:

Ոգևորված այս հաջողությունից, Մ. Ռիբուշկինը 1843 թ. որոշեց կազմակերպել կրոնի դասագրքերի թարգմանությունը: Նա հանձնարարեց Մոսկվյան, միտրոպոլիտ Ֆիլարետի երկերից հայերեն թարգմանել «Համառոտ կատեխիզիսը» և «Չորս ավետարանիչների ընթեռնադիրքը». Առաջինի թարգմանությունը հանձնարարված էր քահանա Մ. Յուզբաշյանին, իսկ երկրորդինը՝ դասատու Սվեշնիկովին: Սակայն դրանք չհրատարակվեցին, նկատի առնելով այն բացասական արձագանքը, որը այդ թարգմանություններին տվեց Ստ. Նազարյանցը³⁰: Վերջինս, ինչպես հայտնի է, քննվող ժամանակաշրջանում դասավանդում էր Կազանի համալսարանում, և ուսումնական օկրուգի ղեկավարությունը հաճախ էր նրան ներգրավում հայերեն լեզվով գրականության խմբագրման և զրաբնիության գործում: Քննադատելով Մ. Յուզբաշյանի և Սվեշնիկովի թարգմանությունները, Ստ. Նազարյանցը խորհուրդ տվեց օգտագործել ավելի հաջող այնպիսի աշխատություններ, որոնցից էին Մ. Սալանտյանի³¹ և Հ. Ալամդարյանի³² գրքերը:

Այնուամենայնիվ, այս փաստերը խոսում են ուսումնական ծրագրի բոլոր դասընթացների համար հայերեն լեզվով սեփական դասագրքեր ստեղծելու Աղաբաբյան դպրոցի ղեկավարության և աստրախանյան գիմնազիաների և դպրոցների դիրեկցիայի մեծ ձգտման մասին: Շատ դասագրքեր ուղարկվում էին Մոսկվա և այլ քաղաքներ: Սա խոսում է այն մասին, որ դրանք հետաքրքրություն էին առաջացնում նաև հայ այլ գաղթօջախներում: Գրքերի մի մասը մտնում էր Աղաբաբյան դպրոցի գրքային ֆոնդ, որը տարեցտարի հարստանում էր: 1840 թ. Աղաբաբյան դպրոցի գրադարանում հաշվվում էր 273 անուն գիրք, որոնց թվում 179 գիրք ուսանելի, 50-ը՝ հայերեն, մնացածները՝ եվրոպական լեզուներով³³: Դպրոցի գրադարանի ֆոնդերի մեծ աճ տեղի ունեցավ 1843 թ., երբ հայ վաճառական Ս. Մակարովը նրա գրադարանին նվիրեց 298 անուն 2000 գիրք և զգալի դրամական միջոցներ³⁴: Այդ գրքերի մեջ էին մասնավորապես Ժ. Ռուսսոյի «Ոգին կամ ընտիր մտքերը», «Ծառերը», Ա. Սմիթի «Ժողովրդական հարստության սկզբնական հիմունքները», Ն. Կարամզինի «Ռուսական պետության պատմությունը», Կ. Լիննեյի «Բնության համակարգը», Վոլտերի «Մարդը 40 թալերովը», տարբեր դա-

27 Նույն տեղում, գ. 5132, թ. 1 և հակ.:

28 Նույն տեղում, թ. 4 և հակ.:

29 ՀԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱԿՏԱԿԱՆ ԱՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԽԻՎ (այսուհետև՝ ՀԱՍՏԱՆԻ ԿՊԱՎ), ֆ. 52, ց. 5, գ. 33, թ. 41—46:

30 ԹԻՍՍՆԻ ԿՊԱՎ, ֆ. 92, ց. 1, գ. 5477, թ. 1, 3 և հակ.:

31 Մ. Սալանտյան, Կրոնագիտութիւն քրիստոնեական, Մոսկուա, 1831:

32 Յ. Ալամդարյան, Հրահանգ քրիստոնեական վարդապետութեան, Տփղիս, 1825:

33 ՀԱՍՏԱՆԻ ԿՊԱՎ, ֆ. 52, ց. 5, գ. 28, թ. 45:

34 Նույն տեղում, գ. 39, թ. 2—23, ԹԻՍՍՆԻ ԿՊԱՎ, ֆ. 92, ց. 1, գ. 5486, թ. 1—3:

թյունների հետ, քանի որ Աստրախանում չկան թեկուզև մի տասնյակ հոգևոր ծաղում ունեցող հայ երեսխաններ⁴¹։ Այնուամենայնիվ, արդեն 1838 թ. Աստրախանում հաջողվեց բացել թեմական ուսումնարան։ Աշակերտների թիվը չէր անցնում 30—35-ից⁴²։ Այնպես, ինչպես և նրան նախորդած հոգևոր ուսումնարանը (որը, հավանաբար, վերացվել էր թեմական ուսումնարան բացելու պատճառով), այն պահվում էր եկեղեցու միջոցներով։ Հոգևոր ուսումնարանի 1839 թ. գումարների մուտք ու ելքի հաշվետվությունը ցույց է տալիս, որ նրա կկամուտը հաշվետու տարում կազմում էր 1440 ռ. 70 կ., չհաշված նախորդ տարվանից մնացած 1572 ռ. 58 կոպեկը։ Եկամուտը կազմված էր հայկական եկեղեցիների վճարումներից⁴³։ Սեմինարիայի աշակերտների մեծ մասը սովորում էր անվճար, իսկ այլ վայրերից եկած երեսխաններին վճարում էին նաև ամենամսյա թոշակ՝ 4 ռ. աշծաթով⁴⁴։ Դա բացատրվում էր թեմի հոգևորականության ձգտումով՝ հնարավորին չափ շատ երեսխանների ընդգրկել ուսումնարանում։

1851 թ. Աստրախանում բացվեց ևս մեկ հայկական կրթական օջախ՝ ծխական դպրոցը։ Առաջին դասարան ընդունվեց 22 երեխա⁴⁵։ Դպրոցը հիմնադրվել էր վարչական մարմինների կարգադրությամբ և գերատեսչական առումով ենթարկվում էր Աղաբաբյան դպրոցի հաստիքային տեսուչին⁴⁶։ Նախատեսվում էր, որ այն պետք է իրականացնի Աղաբաբյան դպրոցի նախապատրաստական դասարանի ֆունկցիաները⁴⁷։ Միական դպրոցում դասավանդվում էին միայն հայոց և ռուսաց լեզուներ ու կրոն։ Հիմնական դասատուի պաշտոնում նշանակվեց Աղաբաբյան դպրոցի կրտսեր դասարանի դասատու Հ. Լևսանյանցը⁴⁸։

1870 թ. Աստրախանում բացվեց օրիորդաց հոգևոր դպրոց (40 աշակերտուհիներով), որտեղ դասավանդվում էր հայերեն, ռուսերեն, կրոն, թվաբանություն և վայելչագրություն⁴⁹։ Բացի այդ, XIX դ. վերջերին Աստրախանում գործում էր երկու երկսեռ ծխական տարեկան դպրոց՝ 40 աշակերտներով։ Այդ դպրոցների առաջին դասարանն ավարտածներից կազմվում էր երկրորդ դասարանը՝ 30 աշակերտներով։ Այդպիսով, ծխական բոլոր դպրոցներին աշակերտների թիվը հասնում էր շուրջ 150-ի⁵⁰։ Սակայն այդ դպրոցներում դասավանդման մակարդակը (հատկապես մայրենի լեզվի)՝ բավականաչափ ցածր էր։ Այդ են վկայում «Արարատ» ամսագրի էջերում հրապարակված նամակի հետևյալ տողերը։ «Ճշմարիտ պետք է ասել, — Աստրախանից գրում է նամակի հեղինակը, — որ Աժտերխան քաղաքը բարեհռչակ գիտնական Սերովյեյն վարժապետ Պատկանեանցի մահից հետո, չգիտեմ որոց անհոգություն, տակավին կարող է մի հայկաբան և հայոց լեզվի և գրականության բազմահմուտ ուսուցչի»⁵¹։

XIX դ. առաջին կեսին Աստրախանում ստեղծվեցին նաև բազմաթիվ մասնավոր դպրոցներ, որոնց մեծամասնությունն ուներ մի դասարան։ Ավելի ճիշտ, դրանք կազմված էին մի խմբից կամ էլ նույնիսկ առանձին սովորողներից, որոնց հետ անցնում էին նախնական դասընթաց՝ սովորեցնում էին գրագիտություն և հաշվել։ Ցավոք, չունենք ճշգրիտ տեղեկություններ այդպիսի

41 Մ. Ս ա ն Թ Ր Ո Ս յ ա ն, Նշվ. աշխ., էջ 288—289։

42 Նույն տեղում, էջ 289։

43 ՀՄՍՀ ԿՊՊԱ, ֆ. 52, ց. 1, գ. 681, թ. 35—36 և հակ.։

44 Մ. Ս ա ն Թ Ր Ո Ս յ ա ն, Նշվ. աշխ., էջ 289։

45 Նույն տեղում, էջ 230։

46 ՀՄՍՀ ԿՊՊԱ, ֆ. 52, ց. 5, գ. 67, թ. 54 և հակ.։

47 ԹԻՍՍՀ ԿՊԱ, ֆ. 92, ց. 1, գ. 6721, թ. 1։

48 ՀՄՍՀ ԿՊՊԱ, ֆ. 52, ց. 5, գ. 67, թ. 2 և հակ., 4 և հակ.։

49 «Արարատ», 1870, հուլիս, էջ 104։

50 Նույն տեղում, 1871, փետրվար, էջ 338, «Փորձ», 1877, № 4, էջ 156։

51 «Արարատ», 1878, № 1, էջ 39—40։

դպրոցների քանակի մասին, սակայն դրանց մասին որոշ պատկերացում է տալիս 1860 թ. կազմված այն դպրոցների ցուցակը, որոնք 1849—1860 թթ. առանց թույլտվության» գոյութիւն են ունեցել Աստրախանում⁵²։ Ցուցակում տրված են հոգևոր 12 անձանց ազգանուններ, որոնք պահում էին մասնավոր դպրոցներ՝ առանց թույլտվության։ Նրանց կեսը հայեր էին։ Այսպես, քահանա Գ. Բախրովը (1851 թ. նա նշանակվել էր հայկական ծխական դպրոցի կրոնի դասատու) երեխաներին սովորեցնում էր քերականություն, հայերեն և ռուսերեն կարգալու գրել, թվաբանություն, կրոն։ Նա ուներ մինչև 20 աշակերտ և յուրաքանչյուրից մի տարվա համար վերցնում էր 7—10 ռ. արծաթով։ Ենթասարկավազ Ի. Բունիաթովն ուներ մինչև 20 աշակերտ, որոնց սովորեցնում էր հայերեն ու ռուսերեն գրել ու կարդալ։ Ենթասարկավազ Մ. Մխիթարովն ուներ մինչև 15 աշակերտ։ Մոտավորապես այդքան աշակերտներ ունեին հայ տիրացուներ Ս. Նիկիտինը (Մկրտչյան), Հ. Լազարևը, Ա. Ալամդարյանը։ Հավանաբար, նրանք սովորողների հետ տանն էին պարապում և դրա համար էլ չէին դիմում իշխանությունը՝ թույլտվության համար։ Սակայն, հավանաբար, կային նաև առավել յուրջ մասնավոր հաստատություններ՝ իսկական դպրոցներ։ Այսպես, օրինակ, պահպանվել է 1850-ական թվականների մի փաստաթուղթ այն մասին, որ զգլարյան վաճառական Գ. Աղաբաբյանին թույլատրեն Աստրախանում իր հաշվին հայկական գիշերօթիկ դպրոց բացել տղաների համար, ուր կդասավանդվեին հայոց ու ռուսաց լեզուներ, կրոն ու թվաբանություն։ Գ. Աղաբաբյանը նաև պարտավորվել էր ընդունակ աշակերտներին իր հաշվին պահել մինչև նրանց գիմնազիան ավարտելը⁵³։

XIX դ. վերջին տասնամյակներին Աստրախանի հայկական Պողոս-Պետրոս և սբ. Եկատերինա եկեղեցիներին կից գոյություն ունեին նաև երկդասյան ծխական դպրոցներ՝ հայ աղջիկների համար⁵⁴։

Այսպիսով, XIX դ. Աստրախանում հայկական կրթության և հայկական ուսումնական հաստատությունների ստեղծման ու զարգացման ժամանակաշրջան էր։ Չնայած հաճախակի զգացվող նյութական դժվարություններին, Աղաբաբյան դպրոցը և ուրիշ հայկական դպրոցներ տասնամյակների ընթացքում հանդիսացան Աստրախանի և ընդհանրապես Ռուսաստանի հայերի ազգային և մշակութային կյանքի կարևոր կենտրոններ։

ИЗ ИСТОРИИ ОРГАНИЗАЦИИ АРМЯНСКОГО ОБРАЗОВАНИЯ В АСТРАХАНИ В XIX ВЕКЕ

ВАРТАН ХАЧАТУРЯН

Резюме

Активное участие населения армянских колоний в хозяйственной и общественной жизни России, его связи с родной культурой требовали

52 ԹԻՄՈՒ ԿՊԱ, ֆ. 92, ց. 1, գ. 6262, թ. 8 և հակ.։

53 Նույն տեղում, գ. 7649, թ. 2—3։

54 Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատոր առաջին, Վենետիկ, Ս. Ղազար, 1903—1905, էջ 264։

создания в этих колониях армянских школ. Первые попытки организации армянских учебных заведений предпринимались с конца XVIII века в Астрахани—старейшей из армянских колоний в России. В начале XIX в. там было открыто известное в истории армянской школы Агабабовское училище, а впоследствии и ряд других учебных заведений. На протяжении многих десятилетий они оставались важными центрами национальной и культурной жизни российских армян.

Документы из фондов Астраханской армянской епархии ЦГИА Армянской ССР и Казанского учебного округа ЦГА Татарской АССР проливают свет на многие, не известные ранее, факты просветительской деятельности российских армян, в частности на историю организации переводов на армянский язык учебников и создания учебных пособий для армянских школ России.